

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԱՌԱՔՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սույն թվականի փետրվարի 18-ին, Երևանի առաջնորդանիստ Ս. Սարգիս Եկեղեցում, Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ և ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանի, տեղի ունեցավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի երկու շրջանավարտ սաների քահանայական ձեռնադրությունը՝ խարտավիլակությամբ Տ. Կարապետ ավագ քհն. Գլճյանի:

Նախօրոք ձեռնադրյալները՝ բարեշնորհ Սերժիկ սրկ. Մանսուրյանը և բարեշնորհ Սիմոն սրկ. Սոուշանյանը, դիմել էին Վեհափառ Հայրապետին՝ փափագ հայտնելով իրենց կյանքը նվիրել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու սպասավորությանը, իբրև քահանա:

Քահանայակոչման կարգի ժամանակ նրանք խոստացան «լանձն առնուլ և կատարել զամենայն հրամանս սրբոց առաքելոցն և հայրապետացն և կալ ըստ կանոնաց նոցա»:

Փետրվարի 18-ին, կիրակի օրը, Ս. Սարգիս եկեղեցու Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց գերաշնորհ Տ. Գարեգին եպս. Ներսիսյանը: Պատարագի ընթացքում գերաշնորհ սրբազան հայրը կատարեց բարեշնորհ սարկավագների քահանայական ձեռնադրության սրբազան արարողությունը: Նորընծաները, բարձրացնելով ձեռքները, հրաժարվեցին աշխարհիկ կյանքից: Ապա, ըստ «Ձեռնադրության Մաշտոց»-ի, ստացան քահանայական փիլոն և պատարագի զգեստներ: Ձեռնադրող սրբազանը սրբալույս մեռոնով օծեց քահանայական լրիվ զգեստավորության մեջ գտնվող նորընծաների ճակատները, վերանվանելով Սերժիկ սարկավագին՝ Տեր Զարեհ քահանա, իսկ Սիմոն սարկավագին՝ Տեր Տիրան քահանա:

Վերջում նորընծաներին ուղղված շնորհավորանքի ու բարեմաղթությունների խոսք ասաց սրբազան հայրը՝ տալով իր խորհուրդներն ու օրհնությունները:

* * *

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է նորընծաներին՝ մաղթելով, որ լինեն նվիրյալ սպասավորները Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և հավատացյալ հայ ժողովրդի: